ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

-- փետրվարի 2025 թվականի № ---Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 7-Ի №77-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը, այդ թվում՝ կարգի 78-րդ կետը, №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի 7-րդ կետի 1-ին ենթակետը և հաշվի առնելով «ՍԱՆԵՐՋԻ ՄԱՅՆԻՆԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2025 թվականի փետրվարի 14-ի գրությունը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Տասներեք ամսով երկարաձգել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2023 թվականի մարտի 7-ի «ՍԱՆԵՐՋԻ ՄԱՅՆԻՆԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Սաներջի» արևային էլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №77-Ա որոշմամբ «ՍԱՆԵՐՋԻ ՄԱՅՆԻՆԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0721 լիցենզիայով ամրագրված «Սաներջի» արևային էլեկտրակայանի կառուցման ժամանակահատվածը՝ ճշգրտելով նաև արտադրության ժամանակահատվածը՝ որոշման մեջ «մինչև 2025 թվականի մարտի 8-ը» բառերը փոխարինելով «մինչև

2026 թվականի ապրիլի 8-ը» բառերով, իսկ «2045 թվականի մարտի 8-ը» բառերը՝ «մինչև 2046 թվականի ապրիլի 8-ը» բառերով:

2. «ՍԱՆԵՐՋԻ ՄԱՅՆԻՆԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ ԼԷ №0721 լիցենզիայի պայմանները չկատարելու պատճառով «Սաներջի» արևային էլեկտրակայանի կառուցման ժամանակահատվածը երկարաձգելու համար, սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից՝
   1) մեկամսյա ժամկետում «ԻՆԵԿՈԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության 2023 թվականի հունվարի 11-ի №G100 գրությամբ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ներկայացված EA23/00006 երաշխիքի համաձայն երաշխավորված 12 500 000 (տասներկու միլիոն հինգ հարյուր հազար) դրամ գումարից 6 181 250 (վեց միլիոն հարյուր ութսունմեկ հազար երկու հարյուր հիսուն) դրամը 900005028130 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.
   2) քառասունհինգօրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ներկայացնել 12 362 500 (տասներկու միլիոն երեք հարյուր վաթսուներկու հազար հինգ հարյուր) դրամ գումարի երաշխիք՝ առնվազն մինչև 2026 թվականի մայիսի 23-ը գործողության ժամկետով:
3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
4. Սույն որոշումը սահմանված ժամկետում կամովին չկատարվելու դեպքում ենթակա է հարկադիր կատարման՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով սահմանված կարգով:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի մարտի 8-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆ

ք. Երևան
-- փետրվարի 2025թ.